XXI դարի
21 դասերը

Bookmark

Yuval Noah Harari

21 LESSONS
for the 21st Century

Bookmark

Յուվալ Նոյ Հարարի

XXI դարի 21 դասերը

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

ԵՐԵՎԱՆ
2020

Bookmark

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87
Հ 390

Հ 390 Հարարի Յուվալ Նոյ
XXI դարի 21 դասերը/ Յուվալ Նոյ Հարարի;
Թարգմանությունն անգլերենից՝ Լիանա Զաքարյանի.- Եր.: Newmag,
2020.- 416 էջ:

Հարարին այս գրքով առաջ է քաշում բազմաթիվ կարևոր հարցեր, որոնց պատասխանները պետք են մեր գոյատևմանը: Մեր անցյալն ու ներկան հասկանալու ճանապարհին Հարարին ստիպում է մտածել արժեքների և իմաստի մասին, հասկանալ, թե ինֆոաղմուկով և անորոշությամբ լի այս աշխարհում ո՛րն է մեր առաքելությունը:

- Ի՞նչ է իրականում կատարվում այս պահին:
- Որո՞նք են այսօրվա մարտահրավերներն ու այլընտրանքները:
- Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնենք:
- Ինչպե՞ս են համակարգիչները և ռոբոտները փոխում մարդ լինելու իմաստը:
- Ինչպե՞ս ենք դիմակայում կեղծ լուրերի համաճարակին:
- Ազգերն ու կրոնները դեռ կարևո՞ր են:
- Ի՞նչ պետք է սովորեցնենք մեր երեխաներին:

21 գլուխներում, որոնք և՛ դրդում են ընդվզել, և՛ մտածելու տեղիք են տալիս, Հարարին, շոշափում է բազմաթիվ խնդիրներ: Ինչպե՞ս կարող ենք պահպանել ընտրության ազատությունը, երբ Մեծ տվյալները հետապնդում են մեզ: Ինչպիսի՞ն է լինելու աշխատանքային շուկան ապագայում, և ի՞նչ հմտություններ են պետք դրանից չարտամղվելու համար: Ինչպե՞ս պետք է պայքարենք ահաբեկչության սպառնալիքի դեմ: Ինչո՞ւ է լիբերալ ժողովրդավարությունը ճգնաժամ ապրում:

Հայերեն հրատարակության համար հատուկ նախաբան է գրել «Գալաքսի» ընկերությունների խմբի համահիմնադիր, «Յուքոմ» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Գուրգեն Խաչատրյանը:

Յուվալ Նոյ Հարարիի երեք գրքերի հայերեն թարգմանությունն իրականացվել է «Գալաքսի» ընկերությունների խմբի հետ գործընկերությամբ:

ՀՏԴ 1/14
ԳՄԴ 87

ISBN 978-9939-884-08-0
Copyright © 2018 by Yuval Noah Harari
Armenian Translation copyright © 2020 by Newmag Publishing House
Յուվալ Նոյ Հարարի «XXI դարի 21 դասերը» © 2020, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Հայերեն հրատարակության իրավունքը ձեռք է բերվել ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Ինչու կարդալ այս գիրքը

Երբ Դուք ավարտեք համալսարանը, Ձեր մասնագիտությունն այլևս ակտուալ չի լինի: Մինչ Դուք քնած եք, արհեստական բանականությունը մշակում է Ձեր տվյալները՝ Ձեզ ավելի լավ թիրախավորելու համար: Ինչպե՞ս ենք պատրաստվում գոյատևել արագ զարգացող, հարցականներով լի այս աշխարհում, որտեղ հին մոդելներն արդեն փլուզվել են, իսկ նորերը դեռ չեն կառուցվել:

Newmag-ի հետ գործընկերությամբ ներկայացնում ենք Յուվալ Նոյ Հարարիի եռագրության հաջորդ հատորը: 21 խորաթափանց էսսեների միջոցով Հարարին ներկայացնում է «հետճշմարտության» աշխարհը, և մեր թիմի համար մեծապես կարևոր է, որ հայ ընթերցողը մասնակիցը լինի ապագայի քննարկումների գլոբալ դիսկուրսին: Արդյոք մենք յուրացրե՞լ ենք 21-րդ դարի դասերը կամ առհասարակ քաջություն ունեցե՞լ ենք առերեսվելու դրանց հետ: Այս գիրքն անդրադառնում է մարդկության ձեռքբերումներին ու ձախողումներին՝ ընդունված ճշմարտություններին մոտենալով հակառակ, հաճախ անսպասելի և սթափեցնող տեսանկյունից:

Վստահ եմ, Ձեզ հետաքրքիր կլինեն Հարարիի գրելու ոճն ու մեկնաբանությունն այն մասին, թե ինչպես են ընտրվում բռնապետերը, պոպուլիստները և ազգայնականները, կամ ինչպես է մեռնում լիբերալիզմը՝ «կեղծ լուրերին» և «շինծու հեղինակություններին» ծառայելով: Տեխնոլոգիական առաջընթացն անշուշտ ոգևորիչ է, սակայն գուցե իրական մարտահրավերը սոցիալական համաձայնության հաստատումն է թվային նոր իրականությունում: Գրքի երրորդ հատվածը հուսահատության և *հույսի* ճարտարապետության մասին է. բաց չթողնեք կարևորը:

Գուրգեն Խաչատրյան
«Գալաքսի» ընկերությունների խմբի համահիմնադիր,
«Յուքոմ» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ

Սիրով նվիրում եմ ամուսնուս՝ Իցիկին, իր անսահման վստահության ու բացառիկության, մորս՝ Պնինային, մշտական հոգատարության ու աջակցության, և տատիկիս՝ Ֆանիին, անսպառ ու անշահախնդիր ուրախություն պարգևելու համար:

Bookmark

Բովանդակություն

Նախաբան 11

Մաս 1. Տեխնոլոգիական մարտահրավեր 19

Գլուխ 1. **Պատրանքների փլուզում**
Աշխարհի վերջը հետաձգվում է 21

Գլուխ 2. **Աշխատանք**
Երբ մեծանաք, հնարավոր է՝ աշխատանք չունենաք 42

Գլուխ 3. **Ազատություն**
Ալգորիթմները հետևում են քեզ 71

Գլուխ 4. **Հավասարություն**
Ապագան նրանն է, ով տիրապետում է տեղեկությանը 103

Մաս 2. Քաղաքական մարտահրավեր 113

Գլուխ 5. **Համայնքներ**
Մարդը մարմին ունի 115

Գլուխ 6. **Քաղաքակրթություն**
Աշխարհում կա ընդամենը մեկ քաղաքակրթություն 124

Գլուխ 7. **Ազգայնականություն**
Գլոբալ խնդիրները գլոբալ լուծումներ են պահանջում 143

Գլուխ 8. **Կրոն**
Հիմա Աստված ծառայում է ազգին 166

Գլուխ 9. **Ներգաղթ**
Հնարավոր է՝ որոշ մշակույթներ ավելի լավն են, քան մյուսները 180

Մաս 3. Հուսահատություն և հույս 201

Գլուխ 10. **Ահաբեկչություն**
Խուճապի մի՛ մատնվեք 203

Bookmark

Գլուխ 11. **Պատերազմ**
Երբեք մի՛ թերագնահատեք մարդկային հիմարությունը 217
Գլուխ 12. **Համեստություն**
Երկրագունդը ձեր շուրջը չի պտտվում 229
Գլուխ 13. **Աստված**
Աստծո անունը զուր տեղը մի՛ տուր 246
Գլուխ 14. **Աշխարհականացում**
Ճանաչի՛ր քո ստվերը 253

Մաս 4. Ճշմարտություն 267
Գլուխ 15. **Տգիտություն**
Դուք գիտեք ավելի քիչ, քան կարծում եք 269
Գլուխ 16. **Արդարություն**
Հնարավոր է՝ արդարության մեր զգացումը հնացել է 276
Գլուխ 17. **Հետճշմարտություն**
Որոշ կեղծ լուրեր ապրում են հավերժ 285
Գլուխ 18. **Գիտական ֆանտաստիկա**
Ապագան այն չէ, ինչ տեսնում եք ֆիլմերում 301

Մաս 5. Մտքի ճկունություն 313
Գլուխ 19. **Կրթություն**
Փոփոխությունը միակ հաստատուն մեծությունն է 315
Գլուխ 20. **Իմաստ**
Կյանքը հորինվածք չէ 326
Գլուխ 21. **Մեդիտացիա**
Պարզապես հետևեք 370

Երախտագիտության խոսք 381
Ծանոթագրություններ 385

Bookmark

Նախաբան

Տեղեկություններով գերբեռնված աշխարհում պարզությունը ուժ է: Տեսականորեն ամեն մեկն էլ կարող է մասնակցել մարդկության ապագայի մասին բանավեճին, բայց շատ քչերն են հստակ պատկերացնում, թե ինչպիսին այն պիտի լինի: Հաճախ նույնիսկ չենք էլ նկատում, որ այդ բանավեճն արդեն ընթանում է, կամ չենք հասկանում քննարկման դրված գըլխավոր հարցերի էությունը: Մեզնից շատերը հազիվ թե կարող են իրենց թույլ տալ այդ մասին մտածելու շքեղություն. չէ՞ որ շատ ավելի հրատապ գործեր ունենք կարգավորելու. պետք է գնանք աշխատանքի, խնամենք երեխաներին և հոգ տանենք մեր տարեց ծնողների մասին: Ցավոք, պատմությունը ոչ մեկին չի խնայում: Նույնիսկ եթե մարդկության ապագան որոշվի առանց ձեր մասնակցության, քանի որ շատ զբաղված եք եղել ձեր երեխաներին կերակրելով ու հագցնելով, դուք և ձեր երեխաները, միևնույն է, չեք ազատվի հետևանքներից: Սա, իհարկե, անարդար է, բայց ո՞վ ասաց, թե պատմությունն արդար է:

Ես, որպես պատմաբան, չեմ կարող մարդկանց սնունդ կամ հագուստ տալ, սակայն կարող եմ որոշ պարզություն մտցնել նրանց պատկերացումներում, որպեսզի այս համընդհանուր խաղում բոլորի շանսերը որոշ չափով հավասար լինեն: Եվ եթե դրա շնորհիվ թեկուզ մի քանի մարդ միանա մեր տեսակի ապագայի մասին քննարկմանը, նշանակում է ես իմ գործն արել եմ:

Իմ առաջին գիրքը՝ *Sapiens*-ը, ուսումնասիրում է մարդկության անցյալը՝ քննության առնելով, թե ինչպես ոչնչով աչքի չընկնող կապիկը դարձավ Երկիր մոլորակի տիրակալ:

Իմ երկրորդ՝ Homo Deus գրքում խորհում եմ ապագայի մասին՝ փորձելով հասկանալ, թե ինչպես կարող են մարդիկ, ի վերջո, վերածվել աստվածների, և ինչ կկատարվի բանականության ու գիտակցության հետ:

Այս գրքում մտադիր եմ կենտրոնանալ ներկայի վրա, հասկանալ, թե ինչ է կատարվում այստեղ և հիմա, սակայն առանց ապագան աչքաթող անելու: Ինչպե՞ս կարող են հեռավոր անցյալի ու ապագայի մասին մեր ընկալումներն օգնել մեզ հասկանալ իրերի ներկա դրությունը, ու ի՞նչ երկընտրանքների առաջ է կանգնած մարդկությունը: Ի՞նչ է տեղի ունենում հիմա: Որո՞նք են այսօրվա մեծագույն մարտահրավերներն ու հնարավորությունները: Ինչի՞ն ուշադրություն դարձնենք: Ի՞նչ սովորեցնենք մեր երեխաներին:

Անվիճելի է, որ յոթ միլիարդ մարդկանցից յուրաքանչյուրն իր հոգսերն ունի, և, ինչպես արդեն նշեցի, քչերը կարող են իրենց թույլ տալ համամարդկային խնդիրների մասին մտածելու ճոխություն: Մումբայի հետնախորշերում երկու երեխաների հետ ապրող միայնակ մայրը մտածում է ուտելիք հայթայթելու մասին: Նավով Միջերկրական ծովի մեջտեղում հայտնված փախստականներն ակնդետ նայում են հորիզոնին՝ հույս ունենալով ցամաք տեսնել, իսկ Լոնդոնի լեփ-լեցուն հիվանդանոցում պառկած մահամերձ մարդը հավաքում է վերջին ուժերը, որ ևս մեկ շունչ քաշի: Այս մարդիկ ավելի հրատապ կենսական խնդիրներ ունեն լուծելու, քան գլոբալ տաքացման կամ լիբերալ ժողովրդավարության ճգնաժամի մասին մտածելը: Չկա որևէ գիրք, որ այս խնդիրներին լուծումներ առաջարկի, ու ես ևս նման իրադրություններում հայտնված մարդկանց դաս տալ չեմ կարող: Միայն հույս ունեմ նրանցից ինչ-որ բան սովորել:

Ես մտադիր եմ համընդհանուր խնդիրներ քննարկել և ուսումնասիրել այն կարևոր գործոնները, որոնք ձևավորում են համաշխարհային հանրության զարգացման ուղղություններն ու, ամենայն հավանականությամբ, ազդեցություն են ունենալու մեր մոլորակի ապագայի վրա: Կյանքի ու մահվան մեջտեղում հայտնված մարդկանց հազիվ թե անհանգստացնի կլիմայի փոփոխությունը, սակայն դրա պատճառով Մումբայի հետնախորշերը, ի վերջո, հնարավոր է՝ բնակության համար այլևս պիտանի չլինեն, կամ փախստականների նոր հոսքեր լցվեն Միջերկրական ծով, իսկ առողջապահության համակարգում համաշխարհային ճգնաժամ սկսվի:

Իրականությունը հյուսված է բազմաթիվ թելերից: Այս գրքում կփորձեմ համաշխարհային խնդիրները լուսաբանել տարբեր կողմերից, սակայն

առանց իրականության սպառիչ պատկեր ներկայացնելու հավակնության: Ի տարբերություն *Sapiens* և Homo Deus գրքերի, այս մեկը ոչ թե պատմական շարադրանք է, այլ քաղած դասերի ընտրանի, դասեր, որոնք, սակայն, պարզ ու հասարակ լուծումներ չեն առաջարկում: Դրանց նպատակն է խթանել ընթերցողի մտածողությունը, նրան մղել հավելյալ խորհրդածությունների, որ նա անմասն չմնա մեր ժամանակների առավել կարևոր թեմաների քննարկումից:

Գիրքը երկխոսություն է հանրության հետ: Շատ գլուխներ գրվել են ի պատասխան ընթերցողների, լրագրողների ու գործընկերների՝ ինձ տված հարցերի: Որոշ ենթագլուխների նախնական տարբերակներ այս կամ այն ձևաչափով արդեն տպագրվել են, ինչն ինձ հնարավորություն է տվել ընթերցողների կարծիքների հիման վրա հղկել իմ փաստարկները: Գրքում խոսում եմ տեխնոլոգիաների, քաղաքականության, կրոնի ու արվեստի մասին: Որոշ գլուխներում փառաբանում եմ մարդկային իմաստությունը, որոշներում էլ ընդգծում մարդկային հիմարության որոշիչ դերը: Բայց գերակա հարցերը մնում են նույնը. ի՞նչ է այսօր կատարվում աշխարհում, և ո՞րն է այս իրադարձությունների խորքային իմաստը:

Ի՞նչ է խորհրդանշում Դոնալդ Թրամփի իշխանության գալը: Ի՞նչ կարող ենք անել կեղծ լուրերի համաճարակի դեմ պայքարելու համար: Ինչո՞ւ է լիբերալ ժողովրդավարությունը ճգնաժամ ապրում: Վերադառնո՞ւմ է արդյոք կրոնական գիտակցությունը: Նոր համաշխարհային պատերա՞զմ է սպասվում: Ո՞ր քաղաքակրթությունն է իշխում աշխարհում՝ արևմտյա՞ն, չինակա՞ն, թե՞ իսլամական: Պե՞տք է արդյոք Եվրոպան բացի իր դռները փախստականների առաջ: Կարո՞ղ են առանձին պետություններ պայքարել սոցիալական անհավասարության ու կլիմայական փոփոխությունների դեմ: Ինչպե՞ս պետք է պայքարել ահաբեկչության դեմ:

Համընդհանուր թեմաների շուրջ խորհելիս՝ փորձել եմ մասնավորն աչքաթող չանել: Հակառակը, ցանկանում եմ ընդգծել դարաշրջանի մեծագույն հեղափոխությունների ու հասարակ մարդկանց առօրյա կյանքի միջև կապը: Ահաբեկչությունը, օրինակ, թե՛ համաշխարհային քաղաքական խնդիր է, թե՛ հոգեբանական բարդ մեխանիզմ: Ահաբեկչությունը գործում է՝ սեղմելով մեր ուղեղում թաքնված «վախի կոճակն» ու տիրանալով միլիոնավոր մարդկանց մտքին ու երևակայությանը: Ճիշտ նույն կերպ լիբերալ ժողովրդավարության ճգնաժամը դրսևորվում է ոչ միայն խորհրդ-

դարաններում ու ընտրատեղամասերում, այլև ազդում է մեր գլխուղեղի նեյրոնների ու սինապսների աշխատանքի վրա: Անձնականն անբաժան է քաղաքականից. այս միտքը վաղուց վերածվել է կլիշեի: Սակայն այսօր, երբ գիտությունը, բիզնեսն ու կառավարությունն ամեն գնով փորձում են մուտք գործել մարդկային ուղեղ, այս ծեծված միտքը ստանում է չարագուշակ իմաստ: Այդ պատճառով էլ գրքում ներառել եմ դիտարկումներ և՛ առանձին անհատների, և՛ ամբողջ հասարակությունների վարքի վերաբերյալ:

Գլոբալացումն անհերևակայելի ճնշում է գործադրում մեր անձնական վարքի ու բարոյական սկզբունքների վրա: Մենք բոլորս խճճվել ենք ամենահաս սարդոստայնի մեջ, որը մի կողմից սահմանափակում է մեր շարժումները, իսկ մյուս կողմից մեր նույնիսկ ամենաչնչին տատանումներն է փոխանցում հեռու-հեռուներ: Մեր ամենօրյա գործունեությունն ազդում է աշխարհի մյուս ծայրում ապրող մարդկանց ու կենդանիների կյանքի վրա: Մեկ մարդու արարքը կարող է ամբողջ աշխարհը կրակի մատնել, ինչպես տեղի ունեցավ Թունիսում Մուհամեդ Բուազիզիի ինքնահրկիզումից հետո, որը սկիզբ դրեց Արաբական գարնանը, կամ էլ սեռական ոտնձգությունների ենթարկված կանանց խոստովանություններից հետո, որով սկսվեց *#MeToo* շարժումը:

Անձնական կյանքի այս համաշխարհային ազդեցությունը ենթադրում է, որ հիմա, ավելի քան երբևէ, կարևոր է բացահայտել մեր կրոնական ու քաղաքական նախապաշարումները, ռասայական ու գենդերային արտոնություններն ու մեր ակամա մեղսակցությունն ինստիտուցիոնալ ճնշումներին: Բայց դա իրագործելի՞ է: Ինչպե՞ս գտնել ամուր բարոյական հիմք մի աշխարհում, որը տարածվում է մեր տեսադաշտից անդին ու գտնվում մեր հսկողությունից դուրս, որտեղ կասկածանքով են նայում բոլոր աստվածներին ու գաղափարախոսություններին:

Գիրքը սկսվում է քաղաքական ու տեխնոլոգիական ժամանակակից խնդիրների ուսումնասիրությամբ: 20-րդ դարի վերջում թվում էր, թե ֆաշիզմի, կոմունիզմի ու լիբերալիզմի միջև գաղափարական հզոր պայքարն ավարտվել է լիբերալիզմի անվերապահ հաղթանակով: Թվում էր, թե ժողովրդավարության, մարդու իրավունքների ու ազատ շուկայական հարաբերությունների հաղթարշավը կանխորոշված է: Սակայն, ինչպես սովորաբար պատահում է, պատմությունն անսպասելիորեն փոխեց

ընթացքը և ֆաշիզմի ու կոմունիզմի վախճանից հետո լիբերալիզմը հայտնվեց փակուղում: Ուրեմն դեպի ո՞ւր ենք շարժվում:

Այս հարցը հատկապես սուր է հենց հիմա, քանի որ լիբերալիզմի հանդեպ վստահությունն անկում է ապրում հենց այն ժամանակ, երբ տեղեկատվական տեխնոլոգիաների ու բիոտեխնոլոգիաների հեղափոխական առաջընթացի պատճառով մարդկությունը կանգնել է նախադեպը չունեցող խնդիրների առաջ: Բիոտեխնոլոգիաների ու տեղեկատվական տեխնոլոգիաների միաձուլման պատճառով շատ մոտ ապագայում միլիոնավոր մարդիկ զրկվելու են աշխատանքից, իսկ ազատությունն ու հավասարությունը մեծապես տուժելու են: Big Data ալգորիթմները կարող են ստեղծել թվային բռնապետություններ՝ ամբողջ ուժը կենտրոնացնելով փոքրաթիվ էլիտայի ձեռքում, իսկ մարդկանց մեծամասնությունը կսկսի տառապել ոչ թե շահագործման, այլ ոչ պիտանի լինելու պատճառով, ինչն էլ ավելի վատ է:

Բիոտեխնոլոգիաների ու տեղեկատվական տեխնոլոգիաների միաձուլման մասին ծավալուն խոսել եմ Homo Deus գրքում: Սակայն այն նվիրված է երկարաժամկետ հեռանկարին՝ առաջ անցնելով հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ, մինչդեռ այս մեկը կենտրոնանում է սոցիալական, տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի վրա, որոնց բախվելու ենք մոտ ապագայում: Ինձ հետաքրքրում է ոչ այնքան անօրգանական կյանքի հնարավոր առաջացումը, որքան սոցիալական պետությանն ու որոշ ինստիտուտների, օրինակ՝ Եվրամիությանը սպառնացող վտանգը:

Ես մտադիր չեմ քննարկել նոր տեխնոլոգիաների բոլոր հնարավոր ազդեցությունները: Թեև տեխնոլոգիաները մեր առաջ հիանալի հնարավորություններ են բացում, իմ առաջ խնդիր եմ դրել մարդկության ուշադրությունը հրավիրել հիմնականում դրանցից բխող սպառնալիքների ու վտանգների վրա: Կորպորացիաներն ու ձեռնարկատերերը, որոնք առաջնորդում են տեխնոլոգիական հեղափոխությունը, բնականաբար գովաբանում են իրենց նվաճումները, այդ պատճառով էլ սոցիոլոգներին, փիլիսոփաներին ու ինձ նման պատմաբաններին է մնում տագնապ բարձրացնել ու բացատրել, որ շատ բաներ կարող են շեղվել ճանապարհից:

Մեր առաջ ծառացած մարտահրավերները սահմանելուց հետո գրքի երկրորդ մասում դիտարկում եմ հնարավոր լուծումների լայն շրջանակ: Կարո՞ղ են Ֆեյսբուքի ճարտարագետներն արհեստական բանականու-